ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/210

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Մասնակից՝ «Հիդրո Գրուպ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Զաքարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿՀ/ՆՅՈՒԹԵՐ/2020/Հ-8» ծածկագրով գնանշման հարցում, թուջե կենցաղային և հիգիենիկ նյութերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14006-2020 գրությամբ «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 11.09.2020թ.-ի թիվ 3//40285-20 գրության հիման վրա, 16.09.2020թ.-ին «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 16.09.2020թ.-ին:

17.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/210 համարի ծածկագիրը:

25.09.2020թ.-ին և 09.10.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.09.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.10.2020թ.-ին:

2. ՀՀ ոստիկանությունի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը 11.09.2020թ.-ի թիվ 3//40285-20 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջներ համաձայն, կից ներկայացնում է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿՀ/ՆՅՈՒԹԵՐ/2020/Հ-8» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ի տվյալները՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Պատվիրատուն 24.09.2020թ.-ին ներկայացրած թիվ 27/969 գրությամբ հայտնել է հետևյալը.

«06.08.2020թ. ժամը 11:00-ին ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿՀ/ՆՅՈՒԹԵՐ/2020/Հ-8 ծածկագրով գնման ընթացակարգի բանակցությունների ժամանակ սկզբից քննարկվել է առաջին չափաբաժինը, այն է լվացող նյութեր (բարձր որակի սպասք լվանալու միջոց):

Գնային առաջարկների քննարկումով առաջին տեղը զբաղեցրել է «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ն՝ առաջաբկելով «Մալվինա» ապրանքանիշը 160 դրամով 1 լիտրին: Բանակցություններին ներկա էին այդ ապրանքատեսակն արտադրող 3 կազմակերպության ներկայացուցիչներ, որոնք հայտարարեցին, որ 160 դրամով 1 լիտրը ներկայացված տեխնիկական բնութագրով հնարավոր չէ մատակարարել:

Բանակցությունների հանձնաժողովի անդամ Ա. Արտեմյանն էլ հայտարարեց, որ նույնիսկ 1 լիտր ջուրն է ավելի թանկ, և քանի որ ինքն է ներկայացնում դրական եզրակացություն ապրանքի վերաբերյալ, հետագայում պահեստ մուտք անելու և ֆինանսական վարչություն ուղարկելու վճարման համար, իսկ առանց դրական եզրակացության այդ գործընթացը չի կատարվի, և ապրանքը չի ընդունվի, ուստի եթե ապրանքը տեխնիկական բնութագրին չհամապատասխանի, ինքը ապրանքի համար չի ներկայացնի դրական եզրակացություն:

Միաժամանակ հայտնում ենք, որ «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ն արտադրող կազմակերպություն չէ, այլ վերակաճառող կազմակերպություն է:

«Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Զաքարյանը շփոթված էր և ուշքի գալով հայտարարեց, որ սխալվել և ներկայացրել է 0.5 լիտրի գինը և պարտավորվեց, որ այդ գնով կմատակարարի պահանջված քանակը և բանակցությունները շարունակվեցին մյուս ապրանքատեսակների վերաբերյալ:

Բուռն սակարկությունների ընթացքում Ա. Արտեմյանը հայտարարեց, որ մասնակիցները գներ են իջեցնում՝ մոռանալով որակի և տեխնիկական բնութագրի մասին, և որ անորակ և չհամապատասխանող ապրանքատեսակին դրական եզրակացություն չի ներկայացնի: Սակարկումներին մասնակցում էին նաև վերավաճառող կազմակերպությունների ներկայացուցիչներ, իսկ արտադրող կազմակերպություններն ավելի համեստ էին կամ լռում էին՝ մեկ կազմակերպություն հայտարարեց, որ իր ներկայությունը զուր է, և հեռացավ բանակցություններից:

Բուռն քննարկումներից 8 օր անց՝ 14.08.2020թ-ին, ՀՀ ոստիկանության գնումների համակարգման բաժինը Armeps ծրագրով «Հիդրո Գրուպ» ՍՊՐ-ին է ուղարկել համապատասխան պայմանագիրը, որը կազմակերպությունը պարտավոր էր 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրված, կնքված ներկայացնել ՀՀ

ոստիկանության գնումների համակարգման բաժին, բայց նշված ժամկետում չեն ներկայացրել: Վերջնաժամկետի օրը մրցույթը համակարգող քարտուղարը զանգահարել է «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ը՝ հավելված 1-ում նշված հեռախոսահամարով և հիշեցրել, որ այդ օրը պայմանագիրը ներկայացնելու վերջին օրն է, ինչին ի պատասխան «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ի ներկայցուցիչը ասել է, որ չի պատրաստվում պայմանագիրը ներկայացնել և բողոքարկելու է մրցույթը: Իսկ մրցույթը համակարգող քարտուղարը զգուշացրել է, որ պայմանագիրը ժամկետին չներկայացվելու դեպքում օրենքով սահմանված կարգով դիմում կներկայացվի ֆինանսների նախարարություն՝ «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար: 25 աշխատանքային օր հետո՝ 22.09.2020թ.-ին, «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ն բողոքարկում է և միաժամանակ հայտնում, որ պատրաստակամ է պայմուսնագիրը կնքելու, և հայտում նշված ապրանքը պատշաճ ժամկետում և որակին, գնին համապատասխան մատակարարելու: Անհասկանալի է, եթե պատրաստակամ էին, կարող էին ժամանակին պայմանագիրը ներկայացնել:»:

3. <u>«Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 17.09.2020թ.-ին գրությամբ դիմել է «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14006-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը 22.09.2020թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՈԳՀԱՊՁԲ-ԿՀ/ՆՅՈՒ-ԹԵՐ/2020/Հ-8 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ ոստիկանությունում 06.08.2020թ-ին, ժամը 11:00-ին ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան փողոց 130 հասցեում տեղի ունեցած բանակցությունների ընթացքում մրցույթի հանձնաժողովի անդամների կողմից դրսևորվել է կողմնակալ վերաբերմունք՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները, մասնավորապես մրցույթային հանձնաժողովում ընդգրկված ՀՀ ոստիկանության պահեստապետը բանակցային փուլում հայտարարել է, որ ինքն է ի պաշտոնե լիազորված ընդունելու «ՀԻԴՐՈ

ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտնում նշված ապրանքները և չի ընդունելու դրանք (վերջինս հայտարարում էր. «Գիտեք չէ ես եմ ապրանքներն ընդունելու ու ես հաստատ դրանք չեմ ընդունի»), չնայած այն հանգամանքին, որ բանակցությունների փուլում իմ կողմից առաջարկված գինը ամենացածրն էր:

Բացի այդ, վերջինս միայն ինձանից է պահանջել ներկայացնել հայտում նշված ապրանքատեսականու նմուշ և ստանալով այն՝ հանձնաժողովի ներկայությամբ հայտարարել է, որ անկախ մրցույթի արդյունքներից նա այդ ապրանքը չի ընդունելու: Չնայած հանձնաժողովի նախագահի հորդորներին՝ դադարեցնել այդ ապօրինի գործողությունները, վերջինս շարունակում էր այդ վարքագիծը՝ պնդելով իրենը (առանց ապարանքը փորձաքննության ուղարկելու կամ դրա որակին չհամապատասխանելու մասին որևէ փաստարկ բերելու): Բանակցությունների փուլին ներկա մյուս մասնակիցները հասկանալով, թե ինչ է կատարվում՝ լքեցին բանակցությունների սրահը:

Հենց այս ամենն էլ մեր մոտ անվստահություն է առաջացրել ինչպես հանձնաժողովի, այնպես էլ գնման գործընթացի հանդեպ և հասկանալով, որ նման պայմաններում հանձնաժողովի կողմից կդրսևորվի ոչ պատշաճ վարքագիծ՝ զերծ ենք մնացել որևէ գործողություն կատարելուց:

Հանձնաժողովի և մասնավորապես ՀՀ ոստիկանության պահեստապետի գործողությունները հակասում են ՀՀ գնումների մասին օրենքի նպատակին և սկզբունքներին, որոնք տվյալ գործընթացային փուլում պարտադիր բնույթ են կրել նրանց համար:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

Վերը նշված հանձնաժողովը 06.08.2020թ.-ին տեղի ունեցած բանակցությունների ընթացքում խախտել է գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, ոչ խտրական հիմունքներով անցկացվելու սկզբունքները՝ որը գնման գործընթացին մասնակցող ընկերությունների համար առաջացրել է այլ մասնակիցների հետ ոչ հավասար պայմաններում գտնվելու օբյեկտիվ զգացում՝ ինչի պատճառով էլ ես և ևս մի քանի ընկերության ներկայացուցիչներ, ինչպես վերևում նշվեց, անվստահություն հայտնելով կատարվող գործընթացին և այն անցկացնողներին՝ ցուցադրաբար լքեցինք բանակցությունների անցկացման սենյակը:

Հիմք ընդունելով վերոգրյալը խնդրում եմ ձեռնարկել գործուն միջոցներ՝ նշված խնդրի լուծման ուղղությամբ:

Միաժամանակ հայտնում ենք, որ մենք պատրաստակամ ենք պայմանագիրը կնքելու և հայտում նշված ապրանքները պատշաճ ժամկետում և որակին, գնին համապատասխան մատակարարելու:»:

4. <u>ՍՑ-LO-2020/210 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կենցաղային և հիգիենիկ նյութերի ձեռքբերման նպատակով 21.07.2020թ.-ին հայտարարվել է թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿՀ/ՆՅՈՒԹԵՐ/2020/Հ-8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ն:

iii. «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿՀ/ՆՅՈՒԹԵՐ/2020/Հ-8» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iv. «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿՀ/ՆՅՈՒԹԵՐ/2020/Հ-8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 06.08.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿՀ/ՆՅՈՒԹԵՐ/2020/Հ-8» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

v. 07.08.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու

որոշման մասին հայտարարությունը, որի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

vi. Պատվիրատուն 14.08.2020թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿՀ/ՆՅՈՒԹԵՐ/2020/Հ-8» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ անհրաժեշտ է 10 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքել, ստորագրել և ներկայացնել Նալբանդյան 130 հասցեով:

vii. Հանձնաժողովի 09.09.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը, ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերջինս զրկվում է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14006-2020 գրությամբ «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ ոստիկանության կողմից կենցաղային և հիգիենիկ նյութերի ձեռքբերման նպատակով 21.07.2020թ.-ին հայտարարված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿՀ/ՆՅՈՒԹԵՐ/2020/Հ-8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգն մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿՀ/ՆՅՈՒԹԵՐ/2020/Հ-8» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում: Հանձնաժողովի 06.08.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ն, ինչով պայմանավորված 07.08.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Պատվիրատուն 14.08.2020թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿՀ/ՆՅՈՒԹԵՐ/2020/Հ-8» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ անհրաժեշտ է 10 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնիքել, ստորագրել և ներկայացնել Նալբանդյան 130 հասցեով, սակայն Հանձնաժողովի 09.09.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայամբ արձանագրվել է, որ «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը, ուստի «Գնումների մասին» ՀՀ

օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերջինս զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿՀ/ՆՅՈՒԹԵՐ/2020/Հ-8» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Այսպիսով, վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված վերլուծության, ինչպես նաև Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հետ համադրման արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ տվյալ դեպքում, «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչպես նաև հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14006-2020 գրությամբ «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/210 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ